տաքրքրական հատուածներ՝ կը նշանակեր գոհացը-
նել մի զգալի պահանջ, իսկ նոցա համեմատու-
թիւնն ժամանակակից հայ մատենագրերի հետ՝
կ՝ամբողջացընէր գործը։

Ահաւասիկ այն խնդիրը, որ մեր վերայ ա-
ռած ենք։

Սակայն, զգալով նորա կարեւորութիւնն,
մենք չենք կարող մոռանալ եւ նորա բարդութեան
մասին. ա. արաբական պատմագրեր երբեմն այն
աստիճան սերտ կը կապեն Հայաստանի նուաճումն
շրջակայ երկրների նուաճման հետ, որ բաժանել
նոցա գրեթէ անհնարին է. մենք յարմար դատե-
ցինք թողնել ամբողջ կտորներ անփոփոխ։ — բ.
Արաբական աշխարհագրերի փոխադարձ համեմա-
տութիւնը կ՝ապացուցանէ, որ նոքա ըստ մեծ մասին
օգտուած են միմեանցից, շատ անգամ բառացի ար-
տագրելով մէկը միւսից ամբողջ հատուածներ Հայ-
աստանի տեղագրութեան մասին. կրկնութիւններից
խորշելու համար մենք առաջ ենք բերած նոցանից
միայն ընդարձակագոյնները, չմոռանալով մատնա-
ցոյց անել այլոց ինչ ինչ տարբերութեանց վերայ։
— գ. Արաբական ձեռագրերը դեռ ահագին քա-
նակութեամբ անմատչելի կը մնան գիտութեան,
ցրուած լինելով Եւրոպայի եւ Ասիայի զանազան
մատենադարաններում. կը ցաւինք, որ նոցա բո-
վանդակութեան հետ ներկայումս հնարաւորու-
թիւն չենք ունեցել ծանօթանալու, սակայն կը
յուսանք, որ ժամանակին դէպք կ՝ունենանք նո-
ցանից եւս մեզ հետաքրքրող տեղեկութիւնները
քաղելու։

Նիւթի բովանդակութեանն համաձայն կա-
րեւոր համարեցինք այստեղ կցելու Հայաստանի
տեղացոյցը, օգտուելով ըստ մեծ մասին Հ. Խնձի-
ճեանի եւ Հ. Ալիշանի պատմական ուսումնասիրու-
թիւններից, որ ըստ չափոյ կարեաց աշխատած ենք
ընդարձակել։